Արձանագրություն N 2

Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի
2010 թվականի հունիսի 17-ի, ժամը 15.00-ի նիստի

Օրակարգ

1. <<Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի>> N1 որոշման նախագծի քննարկում և հաստատում
2. Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի աշխատակարգի նախագծի քննարկում և հաստատում
3. Ոլորտում իրականացված վերջին ժամանակների միջոցառումները.
4. Ելույթներ, մտքերի փոխանակում

Մասնակցեցին

Ֆ. Բերիկյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ *(հանձնաժողովի նախագահ)*
Տ. Հարությունյան	ՀՀ Կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության գլխավոր մասնագետ
Ֆ. Խաչատրյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի տարածքային կառավարման և զարգացման վարչության վերահսկողության բաժնի պետ
Մ. Սարգսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի տնտեսական քաղաքականության և ռազմավարության մշակման վարչության վիճակագրության և վերլուծությունների բաժնի առաջատար մասնագետ
Մ. Աղաջանյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության գլխավոր մասնագետ
Ա.Ղազարյան	ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ներկայացուցչի տեղակալի պաշտոնակատար
Ջ. Մարգիզովա	ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի 'Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում' ծրագրի ղեկավար
Ի.Տեր-Մինասյան	Միգրացիայի միջազգային կազմակերպության Հայաստանի առաքելության գրասենյակի ղեկավար
Ն. Մարության	ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակի իրավաբանական բաժնի ավագ ծառայող
Վ. Ասատրյան	'Մարդկային զարգացման միջազգային կենտրոն' հասարակական կազմակերպության փորձագետ
Գ.Արմաղանովա	'Հայաստանի համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա' հասարակական կազմակերպության փոխնախագահ

Ս.Վարդանյան	Կանանց իրավունքների կենտրոն՝ հասարակական կազմակերպության նախագահ
Է. Վիրապյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի, կանանց հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետ /հրավիրյալ/
Ա. Թանաշյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ ***(հանձնաժողովի քարտուղար)***

Հանձնաժողովի նիստը բացեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ ***Ֆ. Բերիկյանը*** և հանձնաժողովի անդամներին ներկայացրեց նիստի օրակարգը, որից հետո, ըստ աշխատակարգի, խոսքը փոխանցեց հանձնաժողովի քարտուղար ***Ա. Թանաշյանին***՝ ներկայացնելու համար նախորդ նիստում կայացված որոշումների կատարման ընթացքը և բացթողումները:

Ա. Թանաշյանը N1 արձանագրության որոշման 1, 2 և 3 կետերի կատարման մասին զեկուցեց.

1. մշակվել և հանձանժողովի անդամներին է ներկայացվել աշխատանքային խմբեր ստեղծելու մասին N1 որոշման նախագիծը: Նա տեղեկացրեց, որ, առաջին աշխատանքային խմբի կողմից արդեն մշակվել և հանձանժողովին է ներկայացվել <<Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի աշխատակարգի>> նախագիծը: Նա ներկայացրեց երկրորդ՝ Հայաստանում գենդերային բռնության վերացման 2011-2014թթ. ազգային ծրագրի նախագիծը մշակող աշխատանքային խմբի ստեղծման սկզբունքը և մոտեցումները և առաջարկեց հանձաժովի նախագահին քվեարկության դնել N1 որոշման նախագիծը:

2. սահմանված 10-օրյա ժամկետում տեղական և միջազգային կազմակերպություններից իրենց կողմից իրականացվող և առաջիկա ծրագրերի, ինչպես նաև առկա խոչընդոտների մասին տեղեկատվություն են ներկայացրել միայն 3-ը՝ ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակի իրավաբանական բաժնի աշխատող ***Մ. Գրիգորյանը***, ԵԱՀԿ Երևանի գրասենյակի ժողովրդավարության զարգացման ծրագրի ավագ օգնական ***Մ. Հարությունյանը*** և ՄԱԿԶԾ-ի ժողովրդավարական կառավարման և գենդերային հարցերով պատասխանատու ***Ա. Հովհաննիսյանը***, ընդ որում, վերջինս տեղեկատվությունը ներկայացրել է անգլերեն լեզվով, ինչն անընդունելի է, հաշվի առնելով հանձնաժողովի կարգավիճակը: Ա. Թանաշյանն առաջարկեց երկարաձգել տեղեկատվություն ներկայացնելու ժամկետը, հաշվի առնելով խնդրի կարևորությունը:

3. նիստերին վերբերվող գրագրությունն իրականացվել էլեկտրոնային փոստի միջոցով, որը չնայած արդյունավետ է, սակայն որոշ աշխատանքային կարգապահական

խոչընդոտներ է առաջացնում պետական կառավարման մարմինների ներկայացուցիչների համար և առաջարկեց նիստերի հրավերները վերջիններիս ուղարկել պաշտոնական գրություններով:

Ֆ. Բերիկյանն առաջարկեց անցել հաջորդ հարցին, որից հետո քվերակության դնել N1 որոշման նախագիծը և <<Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի աշխատակարգի>> նախագիծը:

Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ ՀՀ Կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության գլխավոր մասնագետ Տ. Հարությունյանը: Նա ներկայացրեց <<Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի աշխատակարգի>> նախագիծը, դրանով սահմանված նպատակը և հիմնական խնդիրները, հանձնաժողովի աշխատանքների կազմակերպումը, ինչպես նաև հանձնաժողովի նախագահի, անդամների և քարտուղարի իրավասությունները: Տ. Հարությունյանը նշեց նաև, որ աշխատակարգը հաստատվելու է ՀՀ վարչապետի համապատասխան որոշմամբ և հանձնաժողովի կողմից հավանության արժանանալու դեպում այն սահմանված կարգով դրվելու է շրջանառության մեջ:

Ֆ. Բերիկյանը դիմեց հանձնաժողովի անդամներին ներկայացնելու իրենց առաջարկությունները և առարկությունները ներկայացված նախագծի վերաբերյալ: ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ներկայացուցչի տ եղակալի պաշտոնակատար Ա.Ղազարյանն առաջարկեց վերանայել հանձնաժողովի արձանագրությունների կազմման գործընթացը, մասնավորապես, դրանց հնաձնաժողովի նախագահի կողմից ստորագրելուց առաջ ներկայացնել հանձնաժողովի անդամների կարծիքին: Դրան ի պատասխան Տ. Հարությունյանը հայտնեց, որ պետական կառավարման համակարգում նման պրակտիկա չկա:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի տարածքային կառավարման և զարգացման վարչության վերահսկողության բաժնի պետ Ֆ. Խաչատրյանն առաջարկեց լրամշակել աշխատակարգի 1-ին կետը՝ դրույթում ներառելով նախագծով սահմանվող բոլոր հարցերը:

Ֆ. Բերիկյանն առաջարկեց ընդհանուր առմամբ հավանություն տալ աշխատակարգի նախագծին, մինչև ս/թ. հունիսի 22-ը գրավոր առաջարկներ ներկայացնել աշխատանքային խմբին և լրամշակելուց հետո այն սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Այնուհետև նա առաջարկեց քննարկել օրակարգի 1-ին կետով ներկայացված N1 որոշման նախագիծը:

Կանանց իրավունքների կենտրոն հասարակական կազմակերպության նախագահ Ս.Վարդանյանն առաջարկեց իրեն ևս ներգրավել Հայաստանում գենդերային բռնության վերացման 2011-2014թթ. ազգային ծրագրի նախագիծը մշակող աշխատանքային խմբի կազմում, հաշվի առնելով ոլորտում իրենց կազմակերպության ունեցած փորձը:

Ֆ. Բերիկյանը կարևորեց ՀԿ-սեկտորի ներկայացվածության հարցը և հավանություն տվեց առաջարկին:

Տ. Հարությունյանը ևս հանավնություն տվեց ՀԿ-սեկտորի աշխատանքային խմբում հավասարակշռված ներկայացվածության հարցին:

Հանձնաժողովի անդամները, մասնավորապես, Ա. Թանաշյանը և Ջ. Սարգիզովան անդրադարձան աշխատանքային խմբի ստեղծման, անդամների ընտրության և քանակի հարցերին:

Ֆ. Բերիկյանն առաջարկեց Ս.Վարդանյանին ներգրավել աշխատանքային խմբում և քվեարկել համալրված կազմը: Հանձնաժողովը առաջարկը քվեարկեց միաձայն:

Օրակարգի 3-րդ՝ <<Ոլորտում իրականացված վերջին ժամանակների միջոցառումները>> հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ Ջ. Սարգիզովան: Նա ներկայացրեց ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի 'Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում' ծրագրի շրջանակներում վերջերս ստեղծված վեբ կայքը (www.genderbasedviolence.am): Այն ունի բովանդակալից և տեղեկատվական հարուստ ցանկ, որն ապահովում է ընդհանուր տեղեկատվություն գենդերային բռնության և հետազոտությունների, իրազեկության բարձրացման և կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրի բաղադրիչների վերաբերյալ: Վեբ կայքն ունի նաև համակարգման և համագործակցության ենթաբաժիներ և նրանում հղում է արվում ինչպես 'Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում' ծրագրի ռեգիոնալ, այնպես էլ Վրաստանի և Ադրբեջանի ազգային կայքերին:

Հանձնաժողովի անդամները բարձր գնահատեցին կատարված աշխատանքը, իսկ Տ. Հարությունյանն առաջարկեց նմանատիպ հաղորդումները դարձնել ավանդույթ և հանձնաժողովի առաջիկա նիստերում հնարավորություն տալ անդամներին ներկայացնելու ոլորտի ձեռքբերումները:

Հանձնաժողովը որոշեց՝

1. հավանություն տալ <<Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի աշխատակարգի>> նախագծին, մինչև ս/թ. հունիսի 22-ը գրավոր առաջարկներ ներկայացնել աշխատանքային խմբին և լրամշակելուց հետո այն սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:
2. հաստատել <<Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի>> N1 որոշման նախագծի լրամշակված տարբերակը (կցվում է):
3. հանձնաժողովի անդամ տեղական և միջազգային կազմակերպություններին՝ 10-օրյա ժամկետում հանձնաժողովի քարտուղարին ներկայացնել իրենց կողմից իրականացվող և առաջիկա ծրագրերի, ինչպես նաև առկա խոչընդոտների մասին հակիրճ տեղեկատվություն:

Հանձնաժողովի նախագահ՝ Ֆ. Բերիկյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Թանաշյան